ՄՈՒՍԱԼԵՌՑԻՆԵՐԻՆ ԶԻՆՎՈՐԱԳՐԵԼՈՒ ՖՐԱՆՍ-ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ (1916 թ.)

ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ

Մուսա լեռան հերոսամարտի շնորհիվ փրկված ավելի քան 4.000 սուետիահայերը, ինչպես հայտնի է, ապաստանեցին Եգիպտոսի Պորտ Սայիդ քաղաքում՝ Սուեզի ջրանցքի ափին: Բրիտանական և ֆրանսիական իշխանությունները 1915 թ. սեպտեմբերից քննարկում էին մուսալեռցիների մարտական ունակություններն իրենց շահերին ծառայեցնելու հարցը: Դրան նպաստում էր այն հանգամանքը, որ մուսալեռցիները գրեթե ամեն շաբաթ դիմում էին դաշնակիցներին՝ իրենց զենք տալու և հայրենի եզերքում թուրք ջարդարարների դեմ մարտնչելու պահանջով: Սիրիան և Կիլիկիան պատերազմից հետո անցնելու էին Ֆրանսիային, հետևաբար՝ այդ տարածաշրջանի հայերի մարտական ունակություններն օգտագործելու առաջնահերթ իրավունքը պատկանում էր նրան:

Դեռևս 1915 թ. աշնանը ֆրանսիացի ծովայինները սկսել էին զինավարժել մի քանի հարյուր հայ կամավորների: Սակայն հոկտեմբերի վերջին իշխանության եկած Արիստիդ Բրիանի կառավարությունը որոշ ժամանակով հրաժարվեց հայերի ռազմական հնարավորություններն օգտագործելու նախագծերից[1]: Հայերի հարցում ֆրանսիական կողմի տատանումներից ու ձգձգումներից որոշեց օգտվել բրիտանական կողմը, որն իր վրա էր վերցրել Պորտ Սայիդի գաղթականական ճամբարը պահելու գործը: Սակայն դա չէր բխում Ֆրանսիայի շահերից, և 1916 թ. սկզբից ֆրանսիական ռազմածովային ուժերի հրամանատարությունը կրկին հանդես եկավ մուսալեռցիներին զինվորական ծառայության վերցնելու նախաձեռնությամբ: Այս անգամ ֆրանսիացիները բախվեցին բրիտանացիների դժգոհությանը և նրանց հարուցած խոչընդոտներին:

Միջերկրականի ֆրանսիական երրորդ նավատորմի հրամանատար, փոխծովակալ Մորոյի 1916 թ. հունվարի 11-ին Պորտ Սայիդի բրիտանական զորքերի հրամանատար, փոխգնդապետ Էլգուդին հղած ճեպագրից տեղեկանում ենք, որ մուսալեռցիների զինվորագրումները գնահատելի արդյունքներ էին ունեցել և սպասվում էր մոտ 500 կամավորների ժամանում նաև Ալեքսանդրիայից: Նման պայմաններում Մորոն անհրաժեշտ էր համարում այդ ուժերին անհապաղ զենք տրամադրել և իր տրամադրության տակ դնել[2]: Հունվարի 20-ին հայ կամավորների առավել արդյունավետ օգտագործելու հնարավորության մասին Մորոն նամակով հարցում

---

[1] *Ա. Պ ե յ լ ե ր յ ա ն. Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918), հ. I, Երևան, 2005, էջ 228:*

[2] *Նույն տեղում, էջ 249:*

արեց նաև Եգիպտոսում բրիտանական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Ջոն Մաքսվելին, սակայն այդպես էլ պատասխան չստացավ[3]:

Փետրվարի սկզբին Հռոդոսից 110 կմ արևելք գտնվող Դոդեկանեզյան կղզիախմբի մեջ մտնող Կաստելլորիզո կղզում տեղակայված ֆրանսիական ծովային ուժերը և տեղացի շուրջ 50 հույն կամավորներ գրավեցին մոտ 7 կմ հեռավորության վրա գտնվող Կաշ (հին հուն. Անտիպիլոս) փոքր նավահանգիստը: Դրա նպատակն էր ավերել այնտեղ գտնվող հեռագրակայանը, որի միջոցով թուրքերը հետևում էին ֆրանսիացիների տեղաշարժերին Կաստելլորիզոյում: Դա ֆրանսիացի ծովայինների առաջին ցամաքային գործողությունն էր թուրքական ափին[4]:

Հաշվի առնելով, որ այդ գործողության ընթացքում հույն կամավորներն արդարացրել էին իրենց, փոխծովակալ Մորոն գտնում էր, որ ժամանակն է օգտագործել իրենց կողմից մարզված, արդեն զենքով ու զինամթերքով ապահովված հայ կամավորներին: Սակայն նրան անհանգստացնում էր այն, որ, երբ ինքը գտնվում էր Փարիզում, հայկական զինուժի օգտագործման դեմ հանդես էր եկել Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան: Փոխծովակալին այդ տեսակետը պաշտպանող նամակ էր ուղարկել նաև լորդ Ջեյմս Բրայսը: Պ. Նուբարի որդին՝ Առաքել բեյ Նուբարը, նույն կարծիքն էր հայտնել Կահիրեում Ֆրանսիայի դեսպան Ալեքսանդր Դեֆրանսին: Դրան դեմ արտահայտվեց նաև փետրվարի սկզբին Կահիրե ժամանած «Նյու Յորք Հերալդի» խմբագիր դոկտոր Ադամ Գիբբոնսը: Նրանց կարծիքով՝ դա կարող էր թուրքերին առիթ տալ կոտորելու դեռևս կենդանի մնացած արևմտահայերի մնացորդներին:

Մորոյին էին դիմել նաև հնչակյան գործիչներ Ստեփան Սապահ-Գյուլյանը և Ապահ Պետրոսյանը, որոնք նշում էին, որ հայերի բնաջնջումն արդեն հասել է իր վերջնակետին ու առաջարկում էին կազմավորել հայ կամավորական կորպուս: Նրանք նախ ներկայացել էին բրիտանական հատուկ ծառայություններին և տեղեկացրել, որ, իբր, հանդես են գալիս Եգիպտոսի հայերի շահերի պաշտպանության կոմիտեի անունից և որ Պ. Նուբարը համամիտ է իրենց հետ: Հնչակյան գործիչներն առաջարկել էին հոգալ ծախսերի մի մասը, եթե ֆրանսիացիների կողմից մարզվող հայերից կազմավորվի կորպուս և օգտագործվի թուրքերի դեմ: Նրանք փետրվարի 2-ին փորձել էին Պորտ Սայիդում հանդիպել Մորոյի հետ: Վերջինիս հրամանով նրանց ընդունել էր երրորդ նավատորմի շտաբի պետ, նավի կապիտան Շամոնարը:

Հնչակյանների առաջարկները Մորոյին թվացել էին տարօրինակ, քանի որ ծանոթ էր այդ առթիվ Պ. Նուբարի բացասական տեսակետին: Մորոն հրահանգեց կապի սպա, բրիտանացի լեյտենանտ Վուլեյին, որը ֆրանսիական նավատորմին էր կցվել գեներալ Ջ. Մաքսվելի խնդրանքով, որպեսզի այդ հայ գործիչներից պահանջի գրավոր ներկայացնել իրենց առաջարկները: Սակայն Վուլեյը, սխալ հասկանալով հրամանը, նամակով պահանջել էր ավելի հիմնավոր ներկայացնել այդ առաջարկները: Նման

---

[3] *Նույն տեղում, էջ 257:*

[4] *Նույն տեղում, էջ 252:*

խմբված իրավիճակում Մորոն որոշեց սպասել այդ հարցի շուրջ Ջ. Մաքսվելի տեսակետին, անձամբ հանդիպել հայկական քաղաքական ուժերին և Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանին[5]:

Պ. Նուբարը դեռևս 1914–1915 թթ. էր առաջարկում հայ կամավորների մասնակցությունը պատերազմին Անտանտի զորքերի կազմում, սակայն դեմ էր հայկական կամավորական առանձին զորամիավորման ստեղծմանը, որը, նրա կարծիքով, թուրքերին վրեժխնդրության նոր առիթ կընձեռեր[6]: Արդեն 1915 թ. վերջերին Պ. Նուբարը գտնում էր, որ հայ կամավորները պատերազմում որևէ էական դերակատարություն ունենալ չեն կարող և միայն ավելի կվատթարացնեն Թուրքիայում մնացած հայերի վիճակը: 1915 թ. դեկտեմբերի 20-ին Գևորգ Ե կաթողիկոսին ուղարկած նամակում նա հետևյալ ձևով էր ներկայացնում կամավորների վերաբերյալ իր տեսակետները. «Սկիզբեն իվեր, և նույն իսկ այն ժամանակ երբ հասարակաց կարծիքը նպաստավոր էր կամավորներու կազմության, ես միշտ վախցած էի անոր առաջ բերելիք հետևանքներուն վրա. մինչև անգամ նախընտրած էի որ այն Հայերը որ կուզեին զինվիլ հայրենիքը պաշտպանելու կամ ազատելու համար, զինվորագրվին Դաշնակիցներու բանակներուն մեջ: Եգիպտոս եղած ժամանակս բացահայտորեն պարզեցի այս գաղափարս և Ձեր Վեհափառությունը կհիշե որ այս գաղափարս որքան սաստկորեն և անվայելորեն դատափետվեցավ. զիս մինչև անգամ իբր ոչ հայրենասեր ամբաստանեցին: Ընդհանուր հոսանքեն մղված և Կովկասի կամավորներուն ձեռք բերած առաջին նպաստավոր հաջողություններեն շլացած՝ ստիպվեցա տեղի տալ և աջակցիլ կամավորներու ջոկատներու կազմության խնդրույն, վասն զի ես ալ սկսա, այլոց նման, հուսալ որ կամավորները պիտի կրնային, իրենց օրինակով, ընդհանուր գործակցություն մը հառաջ բերել իրենց հայրենակցաց մեջ, ինչ որ մեզ իրավունք պիտի տար ինքնավարության մը պահանջումին:

Դժբախտաբար բոլոր մեր հույսերը վիժեցին. տարակուսելի չէ որ ծանր սխալներ գործվեցան, և անհամաձայնությունը կուսակցությանց՝ որոնք իրենց կվերոգրեին այդ ջոկատներու գործունեությունը, զիրենք ավելի երկպառակելու ծառայեցին և գլխավոր պատճառը եղան կամավորներու հայրենասիրական ջանքերու անհաջողության: Այնպես որ, կկրկնեմ, այդ կամավորները՝ միայն Թուրքերուն քստմնելի պատրվակ մը հայթայթեցին իրենց ահռելի ոխակալության և սարսափելի ջարդերուն համար: Ձեր Վեհափառությունը այս ամենը լավ գիտնալուն՝ ավելի չեմ երկարիր այս խնդրույն վրա: Բայց ասոնք պետք են մեզի իբր դաս ծառայել, և համամիտ եմ, որ այս պարագաներուն մեջ, ծանր սխալ մը պիտի ըլլա շարունակել միևնույն ընթացքը՝ որուն հետևանքը պիտի ըլլա տաճկական գավառներու մեջ ողջ մնացած հայության բեկորներեն նոր զոհեր տալու: Փորձը մեզի շատ դառն եղավ և ես, իմ մասիս, անկեղծորեն կցավիմ մինչև վերջ իմ առաջին գաղափարներուս վրա չի համառելուս: Արդեն այս կարծիքը միայն իմ անձնական կարծիքս չէ: Ամեն կողմե, Ամերիկա, Անգլիա, Եգիպ-

---

[5] *Նույն տեղում, էջ 252–253, 256–261:*

[6] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թթ. 68–69:*

տոս և ուրիշ երկրներ գտնվող մեր հայրենակիցներեն և մեր ամենաջերմ և ամենահավատարիմ օտար պաշտպաններեն, ի միջի այլոց Լորտ Պրայսե, նամակներ կստանամ՝ որոնցմով ինձ հստակորեն հակառակ գաղափար մը կհայտնեն կամավորներու մասին, որոնք այլևս դրական ոեէ արդյունք մը չի տալե զատ, Թուրքիո մեջ ողջ մնացած հայ ժողովուրդը ամենամեծ վտանգներու պիտի ենթարկեն: Զենք կրելու ատակ Հայերը, եթե կուզեն կռվիլ իրենց եղբայրներուն վրեժը լուծելու համար, կրնան Դաշնակիցներու բանակներուն մեջ զինվորագրվիլ: Այդ մասին ինձի դիմողներուն միշտ այս կերպով կպատասխանեմ»[7]:

Ինչպես տեսնում ենք, Հայ ազգային պատվիրակության նախագահը կտրականապես դեմ էր հայկական կամավորական առանձին զորամասի ստեղծմանը, որը, նրա կարծիքով, նոր ջարդերի պատճառ կդառնար: Այսպիսով, նրա անունն օգտագործելով, Եգիպտոսի հնչակյանները փորձում էին Մորոյին կեղծ տեղեկություններով ապակողմնորոշել դեպի Պ. Նուբարի որդեգրած ուղուն հակառակ գործելակերպի:

1916 թ. փետրվարի 5-ին Ջ. Մաքսվելը Մորոյին տեղեկացրեց, որ եգիպտահայերը դեմ են հայկական կորպուսի ստեղծմանը՝ մտահոգվելով, որ դա Թուրքիայում մնացած հայրենակիցների նկատմամբ նոր բռնությունների առիթ կդառնա: Գեներալը ևս համամիտ էր այդ կարծիքին և նշում էր, որ ինքը երբեք նպատակ չի ունեցել հայերից ստեղծել ցուցադրական կորպուս կամ նրանց օգտագործել որպես «հայերի»: Գեներալ Ջ. Մաքսվելը առաջարկում էր հայերին զինել ու մարզել, քանի որ նրանք կարող էին արժեքավոր օժանդակ ուժեր դառնալ Թուրքիայի տարածքում դիվերսիաներ կատարելու համար: Նա հայտնում էր, որ կհրամայի, որպեսզի հայերի ռազմական ուսուցումը շարունակվի, իսկ Եգիպտոսի հայկական կոմիտեին կտեղեկացնի, որ հայկական կորպուս կազմավորելու գաղափարից հրաժարվում են[8]:

Հայ կամավորների հարցը խիստ գաղտնիության մեջ պահելու նպատակով Եգիպտոսի բրիտանական ռազմական իշխանությունների հրահանգով արգելվեց տեղի թերթերում որևէ ակնարկ հրապարակել այդ մասին[9]:

Հնչակյանների կեղծիքը բացահայտելուց հետո Մորոն չափազանց բարկացել էր և նույնիսկ մտածում էր Ջ. Մաքսվելին առաջարկել, որպեսզի ընդհանրապես հրաժարվեն հայերին ռազմական գործը սովորեցնելուց, քանի որ դա միայն անախորժություններ էր ստեղծում իրենց համար[10]:

Միջերկրականի առաջին ռազմածովային բանակի գլխավոր հրամանատար, փոխծովակալ Դարտինգ դյու Ֆուրնեն Ֆրանսիայի ռազմածովային նախարար, դերծովակալ Լուսիեն Լակազին ուղարկած ճեպագրում արդարացված էր համարում այն մտավախությունը, որ հայ կամավորների օգտագործումը նոր ջարդերի տեղիք կտա Թուրքիայում, միաժամանակ անօգուտ էր համարում հայերի օգտագործումը այլ երկրների դեմ, քանի որ վերջիններս կարող էին մերժել, իսկ նրանց լեզվի ու տեղանքի իմացութ-

---

[7] *Նույն տեղում, թ. 107:*

[8] *Ա. Պ ե յ լ ե ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 254:*

[9] *Նույն տեղում, էջ 255:*

[10] *Նույն տեղում, էջ 257:*

յան առավելությունը, որ կարող էր լինել Թուրքիայում, այլ վայրերում չէր լինի: «Հարցն ակնհայտորեն բավական բարդ է և պահանջում է մանրազնին քննություն, որպեսզի տուրք չտանք մի արկածախնդրության, որը կարող է թանկ նստել մեր կողմնակիցների վրա և շրջվել նրանց դեմ,– նշում էր դյու Ֆուրնեն և ավելացնում:– Բայց օրերից մի օր հայերը մեզ կցուցաբերեն մեծ աջակցություն»[11]:

Մարտի 15-ին Ֆրանսիայի վարչապետ Արիստիդ Բրիանը ևս Լ. Լակազին ուղարկած ճեպագրում խորհուրդ էր տալիս լավագույն ձևով օգտագործել Պորտ Սայիդում գտնվող մարտունակ հայերի արիությունն ու ընդունակությունները[12]:

Մարտի 8-ին հայ կամավորների խնդրի շուրջ Պ. Նուբարը նամակ ուղարկեց Մորոյին: Այն մարտի 17-ին փոխծովակալին փոխանցեց Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը: Սրբազանը մինչ այդ զրուցել էր Մորոյի հետ կամավորների մասին և վերջինս ցանկություն էր հայտնել իմանալ Պ. Նուբարի կարծիքը: Հայ ազգային պատվիրակության նախագահը գրում էր, որ ցանկալի չէ հայերից առանձին զորամաս կազմելը, քանի որ Թուրքիայում մնացած հայերի մնացորդները պատանդի կարգավիճակում էին և կարող էին ենթարկվել թուրքական վայրագություններին: Նա առաջարկում էր հայերին ընդգրկել դաշնակիցների ռազմարշավային զորքերի կազմում, քանի որ, երբ որոշվի ափհանում կատարել Փոքր Ասիայում, նրանք կարող են չափազանց օգտակար լինել երկրի և լեզվի իմացության շնորհիվ[13]: Մորոն նամակը փոխանցեց Միջերկրականի ֆրանսիական երրորդ նավատորմի հրամանատարի պաշտոնում իրեն փոխարինած, դերծովակալ դը Սպիտզին: Նույն գաղափարները Պ. Նուբարը զարգացնում էր նաև մարտի 22-ին ծովակալ Մորոյին հասցեագրած հաջորդ նամակում[14]: Այն ապրիլի 9-ին Առաքել Նուբարը հանձնեց Ա. Դեֆրանսին, որն էլ փոխանցեց դը Սպիտզին[15]:

Մարտի 14-ին Պ. Նուբարը Փարիզում կամավորների թեմայով զրուցեց հայ գործիչ Միհրան Երամ բեյի հետ: Վերջինս երկիցս հանդիպել էր Ֆրանսիայի վարչապետ Ա. Բրիանին և երկու օրից նորից պետք է նրա հետ քննարկեր հայ կամավորական զորամաս ստեղծելու հարցը: Մ. Երամը տեղեկացրեց, որ ֆրանսիացիները հավանական են համարում հարձակումը Փոքր Ասիայի վրա, որտեղ նախատեսում էին նաև հայ կամավորների մասնակցությունը: Պ. Նուբարը կտրուկ ընդդիմացավ հայկական կամավորական առանձին զորամաս կազմելու գաղափարին և նշեց, որ դրա փոխարեն հայերը պետք է մտնեն դաշնակից զորքերի կազմի մեջ, որպեսզի

---

[11] *Նույն տեղում, էջ 264–265:*

[12] *Նույն տեղում, էջ 273:*

[13] *Նույն տեղում, էջ 276–277:*

[14] *Ա. Գ ա ր ա մ ա ն ո ւ կ յ ա ն. Հայկական Լեգեոնը պատմական, իրավական ու քաղաքական հարցերու լույսին տակ և վավերագրեր.– «Հայկազյան հայագիտական հանդես» (Բեյրութ), հ. Ե, 1974, էջ 67:*

[15] *Ա. Պ ե յ լ ե ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 284:*

թուրքերին նոր կոտորածների առիթ չտան: Մ. Երամը խոստացավ իր ջանքերն ուղղել հենց այդ ուղղությամբ[16]:

Դեռևս փետրվարի 23-ին Եգիպտոսում բրիտանական ռազմարշավային ուժերի նոր գլխավոր հրամանատար, գեներալ Արչիբալդ Մուրրեյը Մորոյին հարցում էր արել մուսալեռցիների մարտական պատրաստվածության մասին և խնդրել թույլ տալ նրանց օգտագործելու հակառակորդի սուզանավերի կայանները հետախուզելու, ինչպես նաև Ռաջուի ուղեկամուրջը ավերելու և այլ վայրերում թուրքերի երկաթուղային հաղորդակցությունը խափանելու նպատակով[17]:

Միջերկրականի ֆրանսիական երրորդ նավատորմի հրամանատար, դերծովակալ դը Սպիտզին Ա. Մուրրեյի մարտի 22-ին ուղարկած հեռագրից տեղեկանում ենք, որ բրիտանացի և ֆրանսիացի սպաները ծրագիր էին մշակել Սիրիայում մի խումբ հայերի ափ հանելու համար, սակայն դա դեռևս չէին համաձայնեցրել հայ կամավորների ղեկավարների հետ[18]: Այս հեռագիրը վկայում է, որ օրակարգում էր հայերից կազմված դիվերսիոն ջոկատն Ալեքսանդրետի շրջան ուղարկելու հարցը:

Մարտին Եգիպտոսի բրիտանական զինվորական իշխանությունները զինել ու մարզել էին շուրջ 100 մուսալեռցիների: Նրանց սովորեցնում էին օգտագործել պայթուցիկ նյութեր: Որոշված էր, որ նրանք ափ էին դուրս գալու Ալեքսանդրետի շրջանում և պայթեցնելու էին Բաղդադի երկաթուղու մի շարք կամուրջներ[19]:

Տեղեկանալով այդ նախապատրաստության մասին՝ Թորգոմ սրբազանը մարտի 25-ին դերծովակալ դը Սպիտզին ուղարկած նամակում հույս հայտնեց, որ հայ կամավորները «կօգտագործվեն միայն այնպես, ինչպես այդ ներկայացվել է Ազգային պատվիրակության նախագահի նամակում, այն է՝ կընդգրկվեն դաշնակիցների զորքերում և ոչ թե կամավորական առանձին ջոկատներում, մի բան, որը կհանգեցնի ծանր և սարսափելի հետևանքների՝ դեռևս Թուրքիայում գտնվող կենդանի մնացած դժբախտ հայերի համար, որոնք թուրքերի ձեռքում իսկական պատանդներ են»[20]:

Այդ նամակից և բրիտանացի ու ֆրանսիացի ռազմական ու քաղաքական գործիչների հետ Թորգոմ սրբազանի անձնական մի շարք հանդիպումներից հետո հայերին թուրքական երկաթգծի ուղղությամբ օգտագործելու նախագիծը մի կողմ դրվեց:

Պորտ Սայիդի բրիտանական զորքերի հրամանատար Էլգուդը բավական դժգոհ մնաց, որ իրենց կողմից մարզված ու զինված հայերին չէին կարող օգտագործել: Ապրիլի 10-ին նա իր դժգոհությունը հայտնեց ֆրանսիական երրորդ նավատորմի շտաբի պետ Շամոնարին և նույնիսկ հարց բարձրաց-

---

[16] Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915–1918. Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996, p. 318.

[17] *Ա. Պ ե յ լ ե ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 264:*

[18] *Նույն տեղում, էջ 277–278:*

[19] *Նույն տեղում, էջ 284–285:*

[20] *Նույն տեղում, էջ 279:*

րեց հայերի ծախսերը փոխհատուցելու կամ դրա դիմաց նրանց ռազմական գործողությունների ուղարկելու խնդրով[21]:

Ապրիլի սկզբին Կիլիկիայի երկաթուղիների վրա Պորտ Սայիդի հայերի ուժերով հարձակումներ կազմակերպելու ծրագրից դաշնակիցները հրաժարվեցին Թորգոմ սրբազանի պահանջով, որպեսզի խուսափեին հայկական նոր ջարդերից: Միևնույն ժամանակ, Ֆրանսիայի արևմտյան բանակների գլխավոր հրամանատար, գեներալ Ժոզեֆ Ժոֆրը Ա. Բրիանին առաջարկում էր Փոքր Ասիայի ափերի մոտ սահմանափակվել միայն ծովային գործողություններով, իսկ եթե, այնուամենայնիվ, որոշվեր ափհանում կատարել, ապա դա պետք է արվեր ոչ թե հայկական անկանոն զորամասերով, այլ դաշնակիցների զորքերի միջոցով, որոնց միացվելու էին նաև հայկական ջոկատները[22]:

Ֆրանսիայի ռազմական նախարար, գեներալ Պիեր Ռոքին ապրիլի 8-ին ուղարկած տեղեկագրում Եգիպտոսի բրիտանական ուժերի շտաբում Ֆրանսիայի ներկայացուցիչ, լեյտենանտ Դոյնել դը Սեն-Քուենտինը առաջարկում էր ֆրանսիացի նավաստիների կողմից մարզվող 250 մուսալեռցիներին ընդունել Արտասահմանյան լեգեոնի մեջ[23]: Նույն հարցի շուրջ մայիսին գեներալի կարծիքը հարցրեց նաև Ա. Բրիանը և նրան ուղարկեց նաև Պ. Նուբարի նամակի պատճենը, ուր վերջինս առաջարկում էր զերծ մնալ մուսալեռցիներից առանձին զորամաս կազմելու և Կիլիկիայում ափհանում կատարելու մտքից, իսկ դաշնակիցների դրոշի ներքո կռվել ցանկացող հայերին ընդգրկել կանոնավոր բանակի կազմի մեջ[24]: Նկատենք, սակայն, որ օսմանահպատակ հայերին ֆրանսիական բանակ չէին կարող ընդունել, քանի որ 1915 թ. օգոստոսի 16-ի օրենքն արգելում էր Ֆրանսիայի կամ նրա դաշնակիցների դեմ պատերազմի մեջ գտնվող պետությունների հպատակներին ընդունել Արտասահմանյան լեգեոնի մեջ[25]:

Մայիսի 21-ին վարչապետ Ա. Բրիանին ուղարկած պատասխան նամակում Պ. Ռոքը տեղեկացնում էր, որ իրենք հրաժարվել են Պորտ Սայիդի հայերին ռազմական նկատառումներով օգտագործելու ծրագրերից, իսկ հայերին ֆրանսիական բանակի շարքերն ընդգրկել թույլ չի տալիս օրենքը[26]:

Ֆրանսիան, սակայն, չէր կարող վերջնականապես հրաժարվել հայկական զինուժն օգտագործելու հնարավորությունից, քանի որ այդ ժամանակաշրջանում Արևելքում միայն աննշան ուժեր ուներ, իսկ հայ կամավորները կարող էին լրացնել այդ բացը: 1916 թ. մայիսի 16-ին ստորագրված Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրով նախատեսվում էր օսմանյան տիրույթները բաժանել Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև: Արևմտյան Հայաստանի մի մասը՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրա-

---

[21] *Նույն տեղում, էջ 286:*
[22] *Նույն տեղում, էջ 294–295:*
[23] *Ա. Գ ա ր ա մ ա ն ո ւ կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 67:*
[24] *Ա. Պ ե յ լ ե ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 303:*
[25] *Ա. Գ ա ր ա մ ա ն ո ւ կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 45:*
[26] *Ա. Պ ե յ լ ե ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 303:*

պիզոնի նահանգներն անցնելու էին Ռուսաստանին, իսկ Խարբերդը, Դիարբեքիրը, Սեբաստիան և Կիլիկիան՝ Ֆրանսիային[27]:

Փաստորեն, պատերազմում դաշնակիցների հաղթանակից հետո Արևմտյան Հայաստանի հարավային և արևմտյան նահանգները, ինչպես նաև Կիլիկիան անցնելու էին Ֆրանսիային: Վերջինիս էին անցնելու նաև Սիրիան ու Լիբանանը: Հետևաբար, ֆրանսիական իշխանություններին անհրաժեշտ էր Միջերկրականի արևելքում զգալի ուժեր կենտրոնացնել, ավելի ակտիվ քաղաքականություն վարել, սեփական ազդեցությունը տարածել տեղի ժողովուրդների վրա: Այդ հանգամանքով էր պայմանավորված, որ հուլիս-սեպտեմբեր ամիսներին Ֆրանսիայի արտաքին գործերի և ռազմական նախարարությունները սկսեցին ամենայն լրջությամբ քննարկել Կիպրոսում 5.000-ոց հայկական զորամաս կազմավորելու հարցը:

Պետք է նշել, որ 1916 թ. ամռանը մուսալեռցի մարտիկները, հերոսամարտի կազմակերպիչներից Եսայի Յաղուբյանի գլխավորությամբ, տեղակայվել էին Կիլիկիայի ափերից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գտնվող մի ամայի կղզում: Նրանց ղեկավարում էր ֆրանսիական բանակի հայազգի ծովային սպա Շառլ-Տիրան Թեքեյանը: Այստեղ նրանք առանձին էին և պետք է թշնամու հարձակման դեպքում ինքնուրույն պաշտպանվեին: Նրանց համար 15 օրը մեկ, երբեմն էլ ավելի ուշ սնունդ էր բերում հունական «Ազիատիկ» առագաստանավը: Ջրի պակասը լրացնելու համար հայ մարտիկները ստիպված էին, իրենց կյանքը վտանգելով, գիշերով նավել հանդիպակաց ափը և այնտեղ գտնվող ձորակի աղբյուրից ջուր վերցնել: Նրանք ապրում էին կղզու քարայրներում, իսկ գիշերները դհոլի նվագակցությամբ կատարում էին ազգային երգեր, որը բարձր էր պահում նրանց մարտական ոգին ու եռանդը: Հայ մարտիկները կղզուց հետևում էին թշնամու քայլերին, նրանց նավերի ու սուզանավերի տեղաշարժերին, գաղտնի անցնում էին թուրքական ափը և թարմ տեղեկություններ հավաքում հակառակորդի մասին, կատարում էին դիվերսիոն գործողություններ թշնամու թիկունքում[28]: Փաստորեն, զենք վերցնելու ընդունակ մուսալեռցիների զգալի մասն արդեն իսկ բավարար ռազմական ուսուցում էին ստացել ֆրանսիացի ծովայինների կողմից և մասնակցել էին մարտական գործողությունների:

Հայկական զորամաս կազմավորելու շուրջ քննարկումների նոր փուլը սկսվեց, երբ Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնը Ա. Բրիանին առաջարկեց Կիպրոսում կազմավորել հայկական կամավորական բանակ: Այդ հեռագիրը վարչապետն ուղարկեց գեներալ Ժ. Ժոֆրին: Սակայն գեներալը հուլիսի 3-ին պատասխանեց, որ այդ պահին թուրքերի դեմ ռազմական գործողություններ չեն նախատեսվում, նաև՝ հայերին ֆրանսիական բանակ չեն կարող վերցնել օրենսդրական արգելքի պատճառով: Ժ. Ժոֆրը գտնում էր, որ հայերին պետք է Ֆրանսիայում օգտագործեին որպես բանվորական ուժ[29]:

---

[27] http://en.wikipedia.org/wiki/Sykes%E2%80%93Picot_Agreement

[28] *Շ.-Տ. Թ ե ք ե յ ա ն. Մուսա լեռան հայերի փրկությունը (Հիշողության էջեր), Երևան, 2002, էջ 43–48:*

[29] *Ա. Պ ե յ լ ե ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 309:*

Հուլիսի 4-ին Պ. Կամբոնը հայ կամավորների հարցի շուրջ Ա. Բրիանին ուղարկեց նոր հեռագիր: Նա տեղեկացնում էր, որ հայերի ռազմական ունակություններն օգտագործելու խնդրի շուրջ զրուցել է Կահիրեի բրիտանական գաղտնի ծառայության պետ, գեներալ Գիլբերտ Քլեյթոնի հետ: Նրանք հանգել էին այն եզրակացության, որ շահավետ կլինի Կիպրոսում համախմբել այն հայերին, որոնք պիտանի կլինեն զինվորագրվելու և կազմելու զորաբանակ, որի սոսկ ներկայությունն անհանգստություն կպատճառի թուրքերին: Դեսպանը նշում էր, որ հրահանգիչները պետք է լինեին ֆրանսիացի սպաները, ծախսերն էլ հոգալու էր Ֆրանսիան, քանի որ Սայքս-Պիկոյի համաձայնագրով պատերազմից հետո Հայաստանի մեծ մասը անցնելու էր իրենց[30]:

Սեպտեմբերի 7-ին գեներալ Ա. Մուրրեյը դերծովակալ դը Սպիտզին ուղարկած հեռագրում հաղորդում էր, որ մուսալեռցի մարտունակ հայերին ֆրանսիացիներն այլևս չեն կարող օգտագործել, քանի որ իրենք հայերին արդեն կազմակերպել են և պատրաստվում են ծառայության ուղարկել Սալոնիկի դաշնակցային բանակում: Նա հիշեցնում էր, որ հայերը 12 ամսից ավելի անգործության մեջ են եղել և իրենք նրանց վրա դրամական միջոցներ են վատնել, այդ է պատճառը, որ որոշել են օգտվել նրանց ծառայություններից[31]:

Ինչպես տեսնում ենք, բրիտանացիները շտապում էին մուսալեռցիներին օգտագործել, նրանց վրա տարածել իրենց ազդեցությունը, միաժամանակ՝ ակնարկում էին, որ նյութական միջոցներ են ծախսել հայերի վրա և ֆրանսիացիներին հասկացնում էին, որ եթե ցանկանում են օգտագործել հայ մարտիկների ռազմական կարողությունները, ապա պետք է փոխհատուցեն իրենց ծախսերը:

Մուսալեռցիներին զինվորագրելու հարցում վճռորոշ դերակատարում ունեցավ ֆրանսիացի պետական և ռազմական գործիչ, փոխգնդապետ Էդուարդ Բրեմոնը: Նա մանրամասն ուսումնասիրեց հայերի մարտական ուժն օգտագործելու հնարավորությունը, պարզեց, որ հայկական ճամբարում կա մոտավորապես 4.500 մարդ, որոնցից զինծառայության համար պիտանի էին 300–350-ը: Ճամբարի հիմնադրման համար ծախսվել էր 16.000 ֆրանկ, պահելու ամսական ծախսը հասնում էր մոտավորապես 30.000 ֆրանկի: Ծախսերը կատարվել էին բացառապես եգիպտական բյուջեից: Ճամբարի հրամանատարը բրիտանացի էր: Ֆրանսիայի ռազմածովային նախարարությունը լեյտենանտ Պիկարին էր հանձնել հայերին ուսուցանելու գործը, և մոտ 200-ի հետ նա հասել էր բարձր արդյունքների: Է. Բրեմոնի կարծիքով՝ հայերը «խելացի են, հրաշալի հրաձիգներ են, ուշիմ են, նրանց խորթ է դյուրաբորբոքությունը: Բայց, բնականաբար, շատ են հեռու մեր մտածելակերպից»[32]: Է. Բրեմոնը տեղեկացել էր, որ Սալոնիկի ճակատից պահանջել էին ուղարկել ջորեպանների և Եգիպտոսի բրիտանական գերագույն կոմիսար Հենրի Մակ Մահոնը հավանություն էր տվել հայ կամավորներին այնտեղ ուղարկելուն: Այդ նպատակով Էլգուդը հա-

---

[30] *Ա. Գ ա ր ա մ ա ն ո ւ կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 67:*
[31] *Ա. Պ ե յ լ ե ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 329:*
[32] *Նույն տեղում, էջ 331:*

վաքագրել էր շուրջ 180 հայի: Է. Բրեմոնը խնդրեց Էլգուդին և գեներալ Ալթամին, որպեսզի ժամանակավորապես հետաձգեին հայերին Սալոնիկ ուղարկելը, տեղեկացնելով, որ ֆրանսիական կառավարությունը մտածում էր հայերին օգտագործել, քանի որ բրիտանա-ֆրանսիական համաձայնությունը նրանց դրել էր Ֆրանսիայի տրամադրության ներքո: Իր ուսումնասիրությունների ու քայլերի վերաբերյալ Է. Բրեմոնը սեպտեմբերի 7-ին զեկուցագիր ներկայացրեց Եգիպտոսում Ֆրանսիայի դեսպան Ա. Դեֆրանսին: Նա խնդրեց, որպեսզի դեսպանը ևս այդ հարցի շուրջ խոսի Հ. Մակ Մահոնի հետ: Է. Բրեմոնը նրան տեղեկացրեց, որ բրիտանացիները ցանկանում են ազատվել հայերի համար կատարվող ծախսերից և ճամբարում ոստիկանական ուժեր պահելու հոգսից: Է. Բրեմոնն առաջարկեց, որ Ֆրանսիան Կիպրոսում հիմնադրի ռազմա-ուսումնական կենտրոն, որը բաղկացած կլիներ գումարտակի հրամանատարից, երեք սպաներից (որոնցից մեկը հաշվապահ), հինգ ենթասպաներից (որոնցից մեկը հաշվապահ): Հրահանգիչների թվում պետք է լինեին բազմաթիվ ուսուցիչներ, որպեսզի արդյունավետորեն դասավանդեն ֆրանսերեն, «որն անելը դժվար չէ այս ժողովրդի շրջանում»: Նշում էր, որ աշխատանքները պետք էր սկսել 200 հայերի հետ, որոնց թիվը արագորեն կկրկնապատկվեր: Գտնում էր, որ հայերից շատերը դասակ ղեկավարելու համար արդեն իսկ ունեն ռազմական բավարար կրթություն[33]:

Սեպտեմբերի 9-ին Ա. Դեֆրանսը Ա. Բրիանին ուղարկեց փոխգնդապետ Է. Բրեմոնի հեռագիրը, որին կից ներկայացնում էր իր կարծիքը մուսալեռցիների զինվորագրման մասին: Դեսպանը հաստատում էր, որ ապրիլից ֆրանսիական ռազմական ու ռազմածովային իշխանություններն անուշադրության են մատնել հայերին, որ բրիտանացիների գլխավոր նպատակը նրանցից ձերբազատվելն էր, և եթե իրենք օգտագործեն հայերին, ապա պետք է փոխհատուցեն բրիտանացիներին, որոնք մեկ տարուց ավել է ամսական 30.000 ֆրանկ էին ծախսում Պորտ Սայիդի հայկական ճամբարի համար[34]:

Է. Բրեմոնի հեռագիրը վճռորոշ նշանակություն ունեցավ և, մեծամասամբ, դրա շնորհիվ էր, որ Ֆրանսիայի ռազմական նախարար Պ. Ռոքը սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել հայկական զորամաս կազմավորելու հարցին[35]: Դա նպաստեց բրիտանացիների ընդդիմությունը չեզոքացնելուն:

Սեպտեմբերի 10-ին Ֆրանսիայի ԱԳՆ-ի Ասիա-Օվկիանիայի վարչության պետ Ժան Գուի ուղարկած զեկուցագրից տեղեկանում ենք, որ բրիտանացի որոշ գործիչներ Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ դը Լա Պանուսին հասկացրել են, որ դեմ են Կիպրոսում հայկական զորամասի տեղակայմանը: «Այս պայմաններում, հարկ կլինի հրաժարվել հայերին օգտագործելու նախագծից, որոնք արժանի չեն այն 360.000 ֆրանկին, որը պետք է վճարել անգլիացիներին»[36],– նշում էր Ժ. Գուն:

---

[33] *Նույն տեղում, էջ 332:*
[34] *Նույն տեղում, էջ 329–330:*
[35] *Նույն տեղում, էջ 345:*
[36] *Նույն տեղում, էջ 330:*

Սեպտեմբերի 11-ին Եգիպտոսի բրիտանական ռազմական իշխանությունները մուսալեռցիներին ներկայացրին կամավորագրության պայմանագրեր, որոնք ստորագրելուց հետո նրանց որպես ջորեպաններ ուղարկելու էին Սալոնիկ: Այն պարտավորեցնում էր բրիտանական բանակում ծառայել մինչև պատերազմի ավարտը, կրել զինվորական կարգապահությունից բխող բոլոր զրկանքները, իսկ անհնազանդության պարագայում ենթարկվել ռազմական տրիբունալի դատին: Հայ զինվորները ծառայելու էին հետևյալ պայմաններով. 1. ամենօրյա աշխատավարձ՝ 8 պիաստրի սահմանում, որից 2-ը գանձվելու էր Պորտ Սայիդի գաղթականների ճամբարի համար, 2. անվճար սնունդ, ինչպիսին տրվում էր բրիտանացի զինվորներին, 3. զինվորական կանոններին համապատասխանող հագուստ, 4. եռամսյա ծառայությունից հետո ամբողջ աշխատավարձի պահպանմամբ տասնօրյա արձակուրդ, եթե զինվորական ծառայության պայմանները թույլատրում էին, 5. եռամսյա ծառայությունից հետո պարգևատրում մեկ շաբաթվա աշխատավարձի չափով, 6. ռազմական իշխանություններն իրավունք ունեին ազատ արձակելու կամավորին, եթե դա նպատակահարմար գտնեին, 7. սպառազինությունը, ապրուստը և հանդերձանքը նման էին լինելու բրիտանական բանակի զինվորների սպառազինությանը, ապրուստին և հանդերձանքին, 8. կամավորը պատվով և Աստծո առջև երդվում էր հավատարիմ մնալ Մեծ Բրիտանիային ու իբրև զինվոր կատարել իր պարտականությունները[37]:

Հայերը, սակայն, հրաժարվեցին այդ պայմանագրերը ստորագրելուց ու Սալոնիկ մեկնելուց: Մուսալեռցիները, որոնք մի քանի ամիս բրիտանացիների կողմից օգտագործվում էին որպես բանակային բանվորներ, կտրականապես դեմ էին ջորեպանի կարգավիճակով Սալոնիկ մեկնելուն: Նրանք պատրաստ էին զինվորական ծառայություն կատարել միայն Կիլիկիան ազատագրելու համար: Չնայած Էլգուդը սպառնաց, որ պայմանագրերը չստորագրելու դեպքում նրանց կուղարկեն Եգիպտոսի խորքերը՝ ճանապարհներ կառուցելու, սակայն հայերը մնացին անդրդվելի: Մուսալեռցիները դիմեցին ֆրանսիական իշխանություններին իրենց ռազմական մարզումները վերսկսելու խնդրանքով, որպեսզի հարմար պահի պատրաստ լինեն ֆրանսիական հովանավորության ներքո ազատագրելու հայրենի Կիլիկիան[38]: Ֆրանսիական ռազմածովային ուժերի հրամանատարությունը, չունենալով կառավարության կողմից հստակ հրահանգներ հայերի ապագայի մասին, մուսալեռցիներին գաղտնաբար խորհուրդ տվեց մտածելու համար բրիտանացիներից ժամանակ պահանջել մինչև ֆրանսիական կառավարությունը վերջիններիս հետ համաձայնություն կկայացներ[39]:

Ինչևէ, սեպտեմբերի 12-ին բրիտանական կապիտան Ջ. Հայը ժամանեց Պորտ Սայիդ, որպեսզի Սալոնիկ տանելու համար հայերին նավ բարձրացնեն, սակայն վերջիններս կտրականապես հրաժարվեցին: Ջ. Հայը կարծում էր, որ դա տեղական՝ արաբների և հայերի մեքենայությունների արդյունք

---

[37] *Նույն տեղում, էջ 332–333:*
[38] *Նույն տեղում, էջ 362–363:*
[39] *Նույն տեղում, էջ 365–366:*

էր[40]: Իրականում, ինչպես տեսանք, հայերը դեմ էին Կիլիկիայից դուրս որևէ այլ վայրում պատերազմին մասնակցելուց, ֆրանսիացիներն էլ գաղտնի խրախուսում էին, որպեսզի նրանք բրիտանական ազդեցության տակ չընկնեին:

Սեպտեմբերի 13-ին Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ դը Լա Պանուսը Պ. Ռոքին հեռագրով տեղեկացրեց, որ Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարությունը համաձայն է Կիպրոսում հայկական կորպուս կազմավորելու նախագծին և պատրաստ է այդ նպատակով կղզու հյուսիսային կամ արևելյան մասում որևէ վայր տրամադրել[41]: Նույն օրը Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պ. Կամբոնը իր հերթին այդ մասին հեռագրեց Ա. Բրիանին: Դեսպանը նաև պարզաբանեց, որ Կիպրոսի բրիտանական գերագույն կոմիսար Ջոն Քլոսոնի առաջարկությամբ է որոշվել այդ նպատակի համար տրամադրել կղզու հյուսիսային կամ արևելյան մասը: Թեև այդ հատվածում ավելի դժվար կլիներ ապահովել զորամասի մատակարարումը, սակայն այնտեղ մահմեդական բնակչություն քիչ կար և դա տեղիք չէր տա հուզումների: Դեսպանը նաև հայտնեց, որ Եգիպտոսում զինվորագրվելու ենթակա հայերի թիվը 400–500 է, իսկ Հնդկաստանում՝ 175[42]:

Սեպտեմբերի 14-ին Ժ. Գուն նոր զեկուցագիր պատրաստեց, ուր վերանայել էր 4 օր առաջ իր ներկայացրած տեսակետները: Նա համոզված էր, որ պատերազմի ավարտից հետո իրենք միևնույնն է պետք է վճարեն բրիտանացիներին Պորտ Սայիդի ճամբարի համար ծախսած ամսական 30.000 ֆրանկը: Գրում էր, որ դա նշանակում է հայերին թույլատրել Ֆրանսիայի ծախսերով տրվելու անգլիամոլության, ամերիկամոլության, հայամոլության: Գտնում էր, որ այդ ուղուց պետք է հետ կանգնել և հայերին պահել Փարիզից անմիջական կախման մեջ: Նշում էր, որ պետք է կամ ամբողջությամբ հրաժարվել հայերից, կամ ամբողջությամբ վերցնել նրանց հոգածությունը: Սակայն կարծում էր, որ առաջին լուծումը ցավալի կլինի Ֆրանսիայի համար, որովհետև «այս մարդիկ խաղաղ կյանքի կվերադառնան իրենց տարածքում, որը մերը կլինի: Նրանք այնտեղ կվերադառնան մեր կողմից լքված լինելու հետևանքով խոցված, անգլերեն սովորած, հայկական կենտրոնական կոմիտեների հետ սերտորեն դաշնակցած, յուրաքանչյուր բնույթի դիմադրության պատրաստ: Իսկ եթե այժմվանից մենք նրանց ղեկավարենք, նրանք կդառնան մեր հրաշալի գործիքը: Ամենահետաքրքրականն այն է, որ մենք այնուամենայնիվ ստիպված կլինենք հատուցել անգլիացիներին: Եվ դա արդեն կազմում է 360.000 ֆրանկ»[43]: Ինչպես տեսնում ենք, այդ գործչին հետաքրքրում էին միայն հետագա շահերն ու հաշվարկները, որոնք վերջին հաշվով հանգում էին այն գումարների հաշվառմանը, որոնք Ֆրանսիան ծախսելու և ստանալու էր հայերին օգտագործելու արդյունքում:

---

[40] *Նույն տեղում, էջ 336:*
[41] *Նույն տեղում, էջ 337:*
[42] *Նույն տեղում:*
[43] *Նույն տեղում, էջ 337–338:*

Սեպտեմբերի 15-ին Ա. Դեֆրանսը Ա. Բրիանին ուղարկած ճեպագրում կրկին ներկայացրեց մուսալեռցիների հարցի շուրջ իր և Է. Բրեմոնի տեսակետները: Վերջինս նոր զեկուցագիր էր կազմել, որն Ա. Դեֆրանսն ուղարկեց Ա. Բրիանին ու Պ. Ռոքին: Դեսպանը հիշեցնում էր, որ ֆրանսիական էսկադրայի միջոցով փրկված մուսալեռցիներին մինչ այդ նախատեսում էին օգտագործել միայն ռազմական որոշակի նպատակներից ելնելով, իսկ ապրիլ ամսից այդ խնդրի հանդեպ ռազմածովային ու ռազմական իշխանությունները գրեթե դադարել էին հետաքրքրություն դրսևորել: Պարզաբանում էր, որ Է. Բրեմոնը, Եգիպտոս ժամանելուց ի վեր, աշխուժորեն հետաքրքրվել է հայերով, և այդ հարցի մասին խորհում էր ավելի լայն հայացքով: Վերջինս գտնում էր, որ չպետք է մտածեն միայն Սիրիայի ափերի մոտ Պորտ Սայիդի 300–400 մարտունակ հայերին արդյունավետ օգտագործելու մասին, այլ՝ տարբեր վայրերից հավաքագրված հայկական զորամաս կազմավորեն, որը մեծ աջակցություն ցույց կտար ֆրանսիական ռազմարշավային կորպուսին, որը վաղ թե ուշ ափ էր դուրս գալու Սիրիայում: Նա գտնում էր, որ տղամարդկանցից բացի, պետք էր ուշադրություն դարձնել կանանց ու երեխաներին, նրանց ուսուցանել այնպես, որպեսզի վերջիններիս միջոցով հնարավոր լիներ վարչականորեն կազմակերպել ֆրանսիական պրոտեկտորատը Սիրիայում:

Այդ ամենը բավական հեռահար ու ընդարձակ ծրագիր էր, և Ա. Դեֆրանսը ցանկանում էր ստանալ վարչապետի հրահանգները: Նրա կարծիքով՝ այդ նախագիծն անհնար կլիներ իրականացնել Եգիպտոսում կամ Կիպրոսում: Դեսպանը գտնում էր, որ բրիտանացիների հետ վեճերից ու բարդություններից խուսափելու համար իրենք պարտավոր էին հայերին տեղափոխել ֆրանսիական վերահսկողության տակ գտնվող որևէ վայր: Նա վստահ էր, որ այդ դժվարին խնդիրը կարելի էր հանձն առնել միայն այն դեպքում, եթե իրենք կամենում էին ձևավորել մի բնակչություն, որը նվիրված կլիներ Ֆրանսիայի կողմից Սիրիայի գրավման ու վարչական կազմակերպման գաղափարին: Նա մատնանշում էր այն հակասությունները, որ գոյություն ունեին իրենց և բրիտանացիների միջև: Եթե ֆրանսիացիները գտնում էին, որ իրենք ավելի մեծ իրավունքներ ունեին մուսալեռցիների վրա, քանի որ փրկել էին նրանց և միաժամանակ նրանք այն երկրամասից էին, որը պատերազմից հետո անցնելու էր Ֆրանսիային, ապա բրիտանացիները կարծում էին, որ ֆրանսիացիները հայերին փրկելուց հետո լքել էին նրանց և իրենք էին հայ գաղթականներին տեղավորել, կերակրել, հովանավորել, կատարել էին մեծ ծախսեր, հետևաբար, ավելի մեծ իրավունքներ էին ձեռք բերել հայերի վրա: Հ. Մակ Մահոնը Ա. Դեֆրանսին հայտնել էր, որ եթե Ֆրանսիան ցանկանում է օգտագործել հայերի մարտական ուժը, ապա պետք է իր վրա վերցներ բոլոր գաղթականների հոգսը: Դեսպանը կարծում էր, որ իրենք պետք է բրիտանացիներին վճարեին կատարած ծախսերը և հայերին տեղափոխեին այլ վայր, իսկ դանդաղելու դեպքում վստահ էր,որ բրիտանացիներն առանց Ֆրանսիայի կար-

ծիքը հաշվի առնելու իրենց իրավունք կվերապահեն օգտագործել հայերին[44]:

Սեպտեմբերի 22-ին Ա. Դեֆրանսը հեռագրեց Ա. Բրիանին, որ Պորտ Սայիդի հայերին օգտագործելու հարցը ֆրանսիական ռազմածովային և Եգիպտոսի բրիտանական ռազմական իշխանությունների միջև տարաձայնությունների պատճառ է դարձել: Դեսպանն անհրաժեշտ էր համարում հարցի շուրջ արագ, հստակ և վերջնական որոշում կայացնել[45]:

Սեպտեմբերի 23-ին Ֆրանսիայի ռազմական նախարար Պ. Ռոքը ռազմածովային նախարար, դերծովակալ Լ. Լակազին տեղեկացրեց դը Լա Պանուսի հեռագրի մասին, ըստ որի՝ բրիտանական կառավարությունը համաձայնություն էր տվել Կիպրոսի հյուսիսում կամ արևելքում կազմավորել հայկական կորպուս: Ռազմական նախարարը հայտնում էր, որ Պորտ Սայիդում հավաքագրվել է 200 հայ, որոնք արդեն մարզվել են Սիրիայի ռազմածովային դիվիզիայի միջոցով: Նրան անհանգստացնում էր այն իրողությունը, որ ֆրանսիական առաջին ռազմածովային բանակի գլխավոր հրամանատար, փոխծովակալ Դարտինգ դյու Ֆուրնեն համաձայնություն էր տվել բրիտանացիներին, որպեսզի օգտագործեն հայերին: Այդ ամենը հաշվի առնելով՝ Պ. Ռոքը որոշել էր Եգիպտոս ու Կիպրոս ուղարկել հետևակային գումարտակի հրամանատար Լուի Ռոմիոյին, որը տեղում պարզելու էր հայկական զորամասի ստեղծման նպատակահարմարությունն ու պայմանները, համաձայնության էր գալու բրիտանացիների հետ: Լ. Ռոմիոն ճշգրտելու էր զինվորագրման ենթակա հայերի թիվը, տեղեկանալու էր Սիրիայում գործող ֆրանսիական ռազմածովային դիվիզիայի հրամանատար դը Սպիտզի տեսակետին, Կիպրոսում հարմար վայր էր գտնելու զորամասի տեղակայման համար, ապա իր վերջնական առաջարկներն էր ներկայացնելու ռազմական նախարարին: Պ. Ռոքը Լ. Լակազին խնդրում էր հրահանգել դը Սպիտզին, որպեսզի մինչև վերջնական որոշում կայացնելը՝ բրիտանացիներին հետ պահեր զինվորագրման ենթակա Պորտ Սայիդի հայերին օգտագործելուց: Գեներալը ցանկանում էր տեղեկանալ, թե արդյոք Սիրիայի ռազմածովային դիվիզիան ի վիճակի էր ռազմական նախարարության միջոցների հաշվին դրամով ու մթերքով ապահովել Կիպրոս մեկնող Լ. Ռոմիոյի առաքելությանը ու հաջողության դեպքում նաև հայկական կորպուսին[46]:

Նույն օրը՝ սեպտեմբերի 23-ին, Պ. Ռոքը հեռագիր ուղարկեց Դոյնել դը Մեն-Քուենտինին, որում տեղեկացնում էր, որ ինքը, հաշվի առնելով գեներալ Գ. Քլեյթոնի՝ Պ. Կամբոնին արած առաջարկը և Է. Բրեմոնի սեպտեմբերի 9-ի հեռագիրը, որոշել է Կիպրոսում կազմավորել ֆրանսիական հրամանատարական կազմ ունեցող հայկական կորպուս, որին արդեն համաձայնություն էր տվել նաև բրիտանական կառավարությունը: Հայտնում էր, որ շուտով Լ. Ռոմիոն մեկնելու է Եգիպտոս, ապա՝ Կիպրոս հայերի հավաքագրման և զորամասն այնտեղ տեղակայելու նյութական պայմաններն ուսումնասիրելու համար: Պ. Ռոքը կարևոր էր համարում թույլ

---

[44] *Նույն տեղում, էջ 339–341:*

[45] *Նույն տեղում, էջ 341:*

[46] *Նույն տեղում, էջ 342–343:*

չտալ բրիտանացիներին՝ Սալոնիկում կամ Եգիպտոսում օգտագործելու Պորտ Սայիդի հայ կամավորներին, քանի որ նրանք պետք է դառնային նախատեսվող կորպուսի միջուկը, հետևաբար՝ անհրաժեշտ էր համարում, որպեսզի Ա. Դեֆրանսն ու ֆրանսիական ռազմածովային դիվիզիայի հրամանատարությունը բրիտանական հրամանատարին համոզեն հետաձգելու հայերին օգտագործելու ծրագիրը[47]:

Սեպտեմբերի 24-ին դը Սեն-Քուենտինը նամակով Ա. Դեֆրանսին մանրամասն տեղեկացրեց ռազմական նախարարից ստացած հեռագրի բովանդակության մասին: Միաժամանակ նշում էր, որ նախարարին ուղարկած պատասխանում տեղյակ էր պահել, որ բրիտանացիները հայերին հավաքագրել էին առանց ֆրանսիական ծովակալի իմացության և հենց իրենց համար ջանքերի շնորհիվ էր, որ հետաձգվել էր հայերին տեղափոխելը, իսկ հարցի կարգավորումը, իրենց առաջարկով, որոշվել էր թողնել Փարիզին ու Լոնդոնին: Լեյտենանտի կարծիքով՝ հայ մարտիկներին օգտագործելու իրավունքը բրիտանացիներն իրենց կզիջեն, եթե ճամբարում մնացող կանանց, երեխաների ու ծերունիների ծախսը, որը կազմում էր ամսական 30.000 ֆրանկ, Ֆրանսիան վերցներ իր վրա: Նրա կարծիքով՝ ամեն ինչ դեռ որոշ ժամանակ կարող էր նախկին ձևով մնալ, եթե Ա. Դեֆրանսը դիմեր գեներալ Ա. Մուրրեյին[48]:

Սեպտեմբերի 25-ին Ա. Դեֆրանսն Իսմայիլիայում հանդիպեց գեներալ Ա. Մուրրեյի հետ: Վերջինս հավաստիացրեց, որ այլևս չի քննարկվում Պորտ Սայիդի հայերին որպես ջորեպաններ Սալոնիկ ուղարկելու հարցը, քանի որ նրանք մերժել էին: Բրիտանացիները փորձել էին հայերին որպես մշակներ օգտագործել Եգիպտոսում, սակայն հպարտ մուսալեռցիները դժգոհել էին նաև այդ առաջարկից: Ա. Դեֆրանսը գեներալին տեղյակ պահեց Լ. Ռոմիոյի առաքելության մասին, որին Ա. Մուրրեյը դրական վերաբերվեց, սակայն հույս հայտնեց, որ տղամարդկանցից բացի ֆրանսիացիները կվերցնեն նաև կանանց ու երեխաների հոգսը[49]:

Հոկտեմբերի 6-ին Ա. Բրիանը հայերի մասին իր տեսակետները ներկայացրեց Պ. Ռոքին: Նա համաձայն էր մուսալեռցի գաղթականների հոգսը Ֆրանսիայի վրա վերցնելուն և կարծում էր, որ տղամարդկանց հետ պետք է Կիպրոս տեղափոխեին նաև նրանց ընտանիքները: Տեղեկացնում էր, որ հայերի գիտակցության մեջ զգալի փոփոխություններ էին տեղի ունեցել, քանի որ դեռ մի քանի ամիս առաջ նրանք ձգտում էին Ռուսաստանի հովանու ներքո ինքնավար Հայաստան ստեղծել, որը ձգվելու էր Արարատից մինչև Ալեքսանդրետի ծոց, սակայն հայկական տարածքները նվաճելուց հետո ռուսներն անուշադրության մատնեցին հայերին և ավելի մեծ ուշադրություն էին դարձնում այդ տարածքներում բնակվող մյուս էթնիկ խմբերին, որն էլ ի դերև հանեց հայ ղեկավար գործիչների երազանքները: Նշում էր, որ այժմ վերջիններս գիտակցել են, որ ինչքան մեծ թվով հայեր գտնվեն Ֆրանսիայի հովանու տակ, այնքան ավելի լավ վիճակում հայտնվելու հույս կարող են ունենալ: Նա գտնում էր, որ քաղաքական անհեռա-

---

[47] *Նույն տեղում, էջ 345:*
[48] *Նույն տեղում, էջ 346:*
[49] *Նույն տեղում, էջ 347:*

տեսություն կլինի, եթե ձեռնպահ մնան հայերին հովանավորելուց և իրենց կողմը չգրավեն Արևելքում միակ աշխատասեր ժողովրդին, որից ապագայում միայն օգուտ կքաղեն: Գրում էր, որ Պ. Նուբարի և նրա բարեկամների ջանքերով Լ. Ռոմիոն կկարողանա մուսալեռցիներից, եգիպտահայերից ու Հնդկաստանի հայ ռազմագերիներից կազմավորել բավական մեծաքանակ առաջին խմբավորումը: Թուրքերի կողմից նոր հակահայկական քայլերից խուսափելու համար Ա. Բրիանը զգուշացնում էր, որ խմբակային զինվորագրումներ Եգիպտոսում չկատարվեն և ձևացնեն, թե Կիպրոսում կազմավորվում է ոչ թե հայկական, այլ ֆրանսիական կորպուս: Վարչապետը համոզված էր, որ այդ միջոցի ձևավորումից հետո հնարավոր կլինի հայկական տարբեր գաղութներում կամավորագրություն կազմակերպել, քանի որ Արևելքի ժողովուրդները սովոր էին պարփակված էթնիկ խմբերով ապրել և հաճույքով կմիանային միատարր խմբավորմանը: Նա գտնում էր, որ Արևելքի ժողովուրդներից կամավորական կորպուսներ կազմավորելու նախաձեռնությունը հաջողություն կունենա, եթե դրանք կազմվեն ըստ ազգությունների[50]*:*

Հոկտեմբերի 18-ին Լ. Ռոմիոն հեռագրեց ռազմական նախարար Պ. Ռոքին, որ Եգիպտոսի բրիտանական իշխանությունների հետ համաձայնության է եկել 500 մուսալեռցի հայերին զինվորագրելու և Կիպրոսում կենտրոնացնելու, իսկ կանանց ու երեխաներին Պորտ Սայիդում թողնելու մասին: Եգիպտոսի բրիտանական իշխանությունները միայն սպասում էին այդ հարցի շուրջ կառավարության կողմից հրահանգների[51]*: Հոկտեմբերի 19-ին Պ. Կամբոնը տեղեկացրեց Ա. Բրիանին, որ բրիտանական կառավարությունն արդեն նշված խնդրի շուրջ հրահանգներ է ուղարկել Եգիպտոս*[52]*:*

Հայկական կամավորական բանակ կազմավորելու համար կարևոր էր նաև հայ գործիչների, հատկապես՝ Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի համաձայնությունը ստանալը: Ինչպես տեսանք, վերջինս դեմ էր հայկական զորամաս ձևավորելուն, քանի որ մտահոգված էր Թուրքիայում մնացած հայերի ճակատագրով: Ֆրանսիացի դիվանագետ Ժորժ Պիկոն և բրիտանացի դիվանագետ Մարկ Սայքսը հայկական զորամաս կազմավորելու հարցի շուրջ Լոնդոնում հոկտեմբերի վերջերին բանակցություններ սկսեցին Պողոս Նուբար փաշայի հետ: Հոկտեմբերի 27-ին նրանք համաձայնություն կայացրեցին, ըստ որի՝ նախատեսվում էր հայկական զինուժն օգտագործել Կիլիկիան ազատագրելու համար: Հայերի աջակցության դիմաց Ֆրանսիան խոստանում էր ինքնավարություն տալ Կիլիկիային և իրեն անցնող հայկական մյուս տարածքներին: Կամավորագրությունը կատարվելու էր խիստ գաղտնիության պայմաններում[53]*:*

---

[50] *Նույն տեղում, էջ 360:*
[51] *Նույն տեղում, էջ 366–367:*
[52] *Նույն տեղում, էջ 367:*
[53] Boghos Nubar's Papers …, pp. 393–397.

Նոյեմբերի 15-ին Ֆրանսիայի ռազմական նախարարի թիվ 7549-9/11 հրամանագրով կազմավորվելու էր Արևելյան լեգեոնը[54]: Այն սկզբնական շրջանում «հայկական» չանվանվեց հայ գործիչների առաջարկով, որպեսզի նոր ջարդերի առիթ չտային, սակայն աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո՝ 1919 թ. հունվարի 18-ից անվանակոչվեց Հայկական լեգեոն: Նրանում ընդգրկվելու էին հայեր և սիրիացիներ: Հետագայում լեգեոնին կամավորագրվեցին գրեթե 5.000 հայեր և մոտ 600 սիրիացիներ:

Նոյեմբերի 7-ին Կիպրոսի բրիտանական գերագույն կոմիսար Ջոն Քլոսոնը Սիրիայի ռազմածովային դիվիզիոնի հրամանատար, դերծովակալ դը Սպիտզին տեղեկացրեց, որ Լ. Ռոմիոյի հետ Ֆամագուստայի ծոցից հյուսիս, Մոնարկա նավահանգստի մոտ ընտրել են հայկական կորպուսի տեղակայման վայրը[55]: Այսպիսով, Արևելյան լեգեոնը տեղակայվելու էր Կիպրոսի արևելյան հատվածում, Ֆամագուստայից 24 կմ հյուսիս:

Փաստորեն, երկարատև քննարկումներից հետո Ֆրանսիան կարողացավ ստանալ Մեծ Բրիտանիայի համաձայնությունը՝ Կիպրոսում հայ կամավորներին զինամարզելու համար: Այդ ընթացքում Եգիպտոսում շուրջ 400 մուսալեռցի կամավորներ արդեն իսկ մարզվել էին ֆրանսիացի ծովայինների կողմից և պատրաստ էին մարտական լուրջ գործողությունների: Արևելյան լեգեոնի առաջին գումարտակը կազմավորվեց մուսալեռցիներից ու եգիպտահայերից: Ինչպես տեսնում ենք, մուսալեռցիների ռազմական ունակություններն օգտագործելու խնդրի քննարկումները, ի վերջո, պատճառ դարձան Արևելյան լեգեոն կազմավորելու որոշման համար:

ФРАНКО-БРИТАНСКИЕ ПЛАНЫ ПО ВОВЛЕЧЕНИЮ В ВОЕННУЮ СЛУЖБУ АРМЯН МУСА-ДАГА (1916 г.)

САМВЕЛ ПОГОСЯН

Р е з ю м е

Муса-Даг находится на северо-восточном побережье Средиземного моря. Местные армяне пережили Геноцид благодаря героической самообороне. Французские корабли перевезли их в Порт-Саид. Они постоянно обращались к французским и британским властям, чтобы им дали шанс сразиться против турок. Франко-британские военные и гражданские власти долго обсуждали вопрос использования военных навыков армян. По соглашению Сайкса-Пико, Киликия и Сирия должны были перейти к Франции. Соглашение дало Франции больше прав на использование возможностей армянских ополченцев. Эти дискуссии, наконец, способствовали формированию Восточного легиона на Кипре в конце 1916 года. Мусадагские армяне стали первыми солдатами в этой добровольческой армии.

[54] *Ա. Գ ա ր ա մ ա ն ո ւ կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 42:*
[55] *Ա. Պ ե յ լ ե ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 369:*

THE FRENCH-BRITISH PLANS OF RECRUITMENT OF ARMENIANS OF MUSA DAGH (1916)

SAMVEL POGHOSYAN

S u m m a r y

The Musa Dagh is located in the north-eastern coast of the Mediterranean Sea. The Armenians living there were survived of the genocide by heroic self-defense. The French ships transported them to Port Said. They constantly appealed to the French and British authorities to give them a chance to fight against the Turks. The Franco-British military and civil authorities had long discussions for using the military skills of Armenians. According to Sykes-Picot agreement Cilicia and Syria had to pass to France, which gave the latter greater rights for the use of the Armenian volunteers. These discussions finally promoted the formation of the Eastern Legion in Cyprus at the end of 1916. The Musa Dagh Armenians became the first soldiers in that voluntary unit.